

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄԴ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 ազգային վիճակագրական ծառայությունը 2007թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

**1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**

(1000 մարդ)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2006 թ. հունվարի 1-ի դրությամբ	3219.2	1665.1	1554.1
2007 թ. հունվարի 1-ի դրությամբ	3222.9	1665.5	1557.4
2008 թ. հունվարի 1-ի դրությամբ	3229.9	1667.8	1562.1

**2.Կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի<sup>1</sup>**

(տարի)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2004թ.	73.4	76.4	70.3
2005թ.	73.5	76.5	70.3
2006թ.	73.3	76.4	70.0

**3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

(1000 կենդանի ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամեր
2005թ. հունվար- դեկտեմբեր	12.3	10.8	13.5
2006թ. հունվար-դեկտեմբեր	13.9	11.8	15.7
2007թ. հունվար- դեկտեմբեր	10.7	9.1	12.1

**4.Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

(1000 կենդանի ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղամեր
2005թ. հունվար- դեկտեմբեր	13.7	12.2	15.0
2006թ. հունվար-դեկտեմբեր	15.8	14.1	17.3
2007թ. հունվար- դեկտեմբեր	12.3	11.0	13.4

5. Մայրական մահացության գործակիցը, 100000 կենդանի ծնվածի հաշվով, 2007թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 15.0 (6 դեպք)՝ 2006թ. հունվար-դեկտեմբերի 26.6 (10 դեպքի) դիմաց:

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2007/2008 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

<sup>1</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը, միջին հաշվով, պետք է ապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2007թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 973021 դրամ կամ 2844 ԱՄՆ դոլար:

14. Գործազրկության (պաշտոնական) մակարդակը 2007թ. դեկտեմբերին կազմել է 6.6 %: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2007թ. դեկտեմբերին կազմել է 10.2 %, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 3.3 %:

15. 2007թ. հունվար-դեկտեմբերին տնտեսության մեջ զբաղված է եղել ԳՂ բնակչության 33.5 %-ը, այդ թվում կանանց՝ 29.7%-ը, տղամարդկանց՝ 37.6 %-ը: